Հայտատուն «ՍՏԱՆԴԱՐՏԱՑՄԱՆ ԵՎ ՉԱՓԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՐՄԻՆ» ՓԲ Ընկերության ֆիզիկական անձանց սերտիֆիկացման մարմին է ներկայացնում սերտիֆիկացման հայտ * (հայտատուն ինքն է ընտրում սերտիֆիկացման սխեման) և համապատասխանությունը հաստատելու համար հետևյալ անհրաժեշտ փաստաթղթերը.

- անձը հաստատող փաստաթղթի պատճենը;
- ինքնակենսագրությունը;
- բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթության մասին դիպլոմի պատճենը՝ հայտարարված սերտիֆիկացման ոլորտին համապատասխան;
- լրացուցիչ կրթության մասին փաստաթղթի պատճենը;
- տեղեկանք աշխատանքի վայրից՝ նշելով պաշտոնը, աշխատանքի ընդունման տարեթիվը, տվյալ բնագավառում ընդհանուր աշխատանքային փորձը;
- վկայական՝ հայտարարված սերտիֆիկացման ոլորտում առնվազն 18 ժամ տևողությամբ դասընթացի մասին;
- մասնագիտական վերապատրաստման մասին փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում);
- հաշվետվությունները* գործնական աշխատանքային փորձի վերաբերյալ՝

  - եթե հայտատուն դիմում է որպես «աուդիտոր» սերտիֆիկացման համար, ապա նա պետք է լրացուցիչ ներկայացնի կառավարման համակարգերի աուդիտին մասնակցության վկայությունները՝ ըստ հայտարարված սերտիֆիկացման ոլորտի առնվազն 4 աուդիտ, ներառյալ՝ առնվազն 20 աուդիտ/օրը, որից 12 օրը «տեղում»;
  - եթե հայտատուն դիմում է որպես «փորձագետ» սերտիֆիկացման համար, ապա նա պետք է լրացուցիչ ներկայացնի արտադրանքի սերտիֆիկացման մասնակցության վկայություններ՝ ըստ հայտարարված սերտիֆիկացման ոլորտի առնվազն 2 սերտիֆիկացում,
  - եթե հայտատուն դիմում է որպես «արտադրական վտանգավոր օբյեկտի փորձագետ», ապա նա պետք է լրացուցիչ ներկայացնի արտադրական վտանգավոր օբյեկտի փորձաքննության մասնակցության վկայություններ ըստ հայտարարված սերտիֆիկացման ոլորտի՝ առնվազն 4 փորձաքննություն

- նկարը (3×4սմ)
- վճարման անդորրագիրը:

Հայտատուն կատարում է սերտիֆիկացման ծառայությունների մատուցման համար վճարումներ: Վճարման անդորրագիրը ներկայացվում է հայտի հետ միասին: Քննությունը չհանձնելու դեպքում վճարված գումարը չի վերադարձվում:

Հայտատուն կնքում է պայմանագիր «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության անձանց սերտիֆիկացման մարմնի հետ:

*Հաշվետվությունները գործնական աշխատանքային փորձի վերաբերյալ ներկայացվում են սերտիֆիկացման մարմնում աշխատող աուդիտորները և փորձագետները